ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 09

11 սեպտեմբերի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Սամվել Անանյանը, Աշոտ Անտինյանը, Գրիգոր Կարապետյանը, Արայիկ Քոչարյանը, Սերյոժա Սարդարյանը, Արշակ Սրապյանը, Շուշանիկ Հակոբյանը, Էմմա Գասպարյանը, Պավլիկ Պապինյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Սևակ Խաչատրյանը, Նաիրա Հաիությունյանը և Սերյոժա Եսայանը:

Նիստից բացակայում էր՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Արմենուհի Ոսկանյանը:

Նիստին նեկա էին բնության գիտությունների դոկտոր Ինդրիխ Պետրլիկը, լրատվության ներկայացուցիչներ, ՀԿ ներկայացուցիչներ և աշխատակազմի պատասխանատուներ:

Ելույթի խոսքի համար հերթագրվեցին.

1. Բնության գիտությունների դոկտոր, «Այփեն» միջազգային կայուն աղտոտիչների և տոքսիկ նյութերի վերացման ցանցի մասնագետ, «Անիկա» կազմակերպության տոքսիկ նյութերի և թափոնների ծրագրերի տնօրեն Ինդրիխ Պետրլիկը:

2. Իրավապաշտպան, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Օլեգ Դուլգարյանը:

Հարց հնչեցնելու համար հերթագրվեց «ՈՒղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ի նախագահ Գևորգ Քոթանջյանը

Նիստն իրավազոր է՝ նիստին ներկա են ավագանու 14 անդամ

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սուրեն Կոստանդյանը ժամը 14.10-ին նիստը հայտարարեց բացված: Նա ողջունեց ներկաներին, շնորհավորեց ավագանու անդամներին հերթական իններորդ նստաշրջանի բացման կապակցությամբ, մաղթեց բեղմնավոր և արդյունավետ աշխատանք՝ ի շահ Փամբակ համայնքի զարգացման:

Ս. Կոստանդյանը առաջարկեց իր նախաձեռնությամբ օրակարգի 6-րդ հարցում՝ «Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի ու մրցույթի պայմանները հաստատելու մասին» որոշման նախագծում կատարել լրացում, վարձակալության իրավունքով տրամադրվող 1 լոտ հողամասին ավելացնել ևս 1 լոտ, կառուցապատման իրավունքով տրամադրվող 1 լոտ հողամասին նույնպես ավելացնել 1 լոտ: Ինչպես նաև օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 8-11-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով «ԱՆՏԱՌ ՌԵԶՈՐԹ» ՍՊԸ-ին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Փամբակ համայնքի ավագանու անդամ Արմենուհի Ապրեսի Ոսկանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

10. Փամբակ համայնքի կողմից ձեռք բերված 8 հեռուստացույցները նվիրատվությամբ փոխանցելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

11. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

Քվեարկությամբ, կողմ՝ 14 ձայների համաձայնությամբ որոշման նախագծերն ընդգրկվեցին օրակարգում, իսկ օրակարգի 6-րդ հարցում կատարվեց լրացում:

Նիստ վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Քվեարկությամբ, կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 092-Ա/:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2025թ-ի սեպտեմբերի 11-ի թիվ 09 հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

2. Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

3. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

4. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Գագիկ Ալեքսանդրի Ավագյանին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

6. Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի ու մրցույթի պայմանները հաստատելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:

զեկ. Ս. Կոստանդյան

8. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով «ԱՆՏԱՌ ՌԵԶՈՐԹ» ՍՊԸ-ին օտարելու մասին:

զեկ. Ա. Օհանյան

9. Փամբակ համայնքի ավագանու անդամ Արմենուհի Ապրեսի Ոսկանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

10. Փամբակ համայնքի կողմից ձեռք բերված 8 հեռուստացույցները նվիրատվությամբ փոխանցելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

11. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքներում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն կատարելուն նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով «Զով-Գուժ» ՍՊԸ-ի 09.07.2025թ-ի գրությունը, ՀՀ կառավարության 19.11.2014թ.-ի 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 13.08.2025թ-ին անցկացված հանրային լսումների արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը և տեսաձայնագրությունը՝ տալ նախնական համաձայնություն /կամ անհամաձայնություն/ «Զով-Գուժ» ՍՊԸ-ի կողմից Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ նախատեսվող գործունեության իրականացմանը:

Համայնքի ղեկավարը նշեց, որ նախորդ՝ 19.08.2025թ-ին կայացած նիստում քննարկվել է վերոնշյալ նախագիծը, բայց քանի որ քվեարկության արդյունքում որոշում չի ընդունվել, հարցը ընդգրկվել է այս նիստի օրակարգում: Նա նշեց, որ 28.08.2025թ-ին իրեն են դիմել նաև Քարաբերդ բնակավայրի մի խումբ բնակիչներ, ովքեր հայտնել են, որ կողմ են երկրաբանական ուսումնասիրությանը: Նրանք խնդրել են ներկայացնել ավագանուն, որ որոշում կայացնելուց առաջ հաշվի առնեն հենց գյուղի բնակիչների կարծիքը, որովհետև իրենք են ապրում այնտեղ և իրենք ավելի լավ գիտեն իրենց կարիքները:

Քվեարկության դրվեց գործողությանը համաձայնություն տալու հարցը:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 2 ձեռնպահ՝ 0 ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 093-Ա/:
Իրավապաշտպան Օլեգ Դուլգարյանը նշեց, որ հենց այդ հարցի հետ կապված էր ինքը ցանկանում ելույթ ունենալ և հիմա անիմաստ է համարում ելույթ ունենալ: Նա նշեց, որ Քարաբերդի հետ կապված որոշակի տվյալներ պիտի ներկայացներ, որը անիմաստ է գտնում հիմա ներկայացնել:
Համայնքի ղեկավարի հարցմանը, թէ հանու՞մ եք Ձեր ելույթը, Օ. Դուլգարյանը պատասխանեց.
- Ես իմ ելույթը հանում եմ, բայց խիստ կասկածում եմ, որ բնակիչները, ովքեր մինչև հիմա դեմ են եղել, հիմա կողմ են:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, ավագանու անդամ Սամվել Անանյանը նշեց, որ ավագանու անդամների մեծամասնությունը մասնակցել են հանրային լսմանը և բնակիչների մեծամասնությունը կողմ է արտահայտվել:
Պ-ն Դուլգարյանը պատասխանեց.
- Եթե Դուք նոր եք մասնակցել, ես 2020թ-ից մասնակցում եմ, ընդհուպ մինչև խոշորացումը: Նախորդ նիստին, երբ որ հայտարարվեց, որ բնակիչները կողմ են, դուք որպես ավագանու անդամ ազնիվ չէիք ամեն դեպքում: Օ. Դուլգարյանը դուրս եկավ նիստերի դահլիճից:
Հարց հնչեցրեց «ՈՒղղակի ժողովրդավարություն» ՀԿ-ի նախագահ Գևորգ Քոթանջյանը.
- Արդյո՞ք տվյալ կազմակերպությունը գումար է վճարել համայնքի բյուջե, կամ համայնքային ենթակայության որևէ ՀԱԿ-ի բյուջե:
Պատասխանեց համայնքի ղեկավարը.
- Տեղեկացնում եմ, որ տվյալ կազմակերպությունը ոչ համայնքի բյուջե, ոչ որևէ ՀՈԱԿ-ի բյուջե գումար չի վճարել:
2. ԼՍԵՑԻՆ - «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ ՆԼ-640 լեռնահատկացման ակտը, տալ համաձայնություն Փամբակ համայնք գյուղ Քարաբերդ 06-108-0105-0009 կադաստրային ծածկագրում գտնվող 4.0369 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման գործառնական նշանակության համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, մինչև 03.09.2050թ-ը, առանց մրցույթի «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն: Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 810000 /ութ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 094-Ա/:

3. ԼՍԵՑԻՆ - «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին օգտակար հանածոներ արդյունահանելու նպատակով վարձակալության իրավունքով հողամաս տրամադրելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 23.03.2021թ. «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին տրված օգտակար հանածոների արդյունահանման ՇԱԹՎ-29/640 թույլտվությունը և 23.03.2021թ. թիվ NԼ-640 լեռնահատկացման ակտը տալ համաձայնություն Փամբակ համայնք գյուղ Քարաբերդ 06-108-0105-0011 կադաստրային ծածկագրում գտնվող 1.63421 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը՝ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով, մինչև 03.09.2050թ-ը, առանց մրցույթի «Ա.Ա.Բ. ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրելուն: Հողամասի տարեկան վարձավճարի չափը սահմանել 330000 /երեք հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 12, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 095-Ա/:

4. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով Գագիկ Ալեքսանդրի Ավագյանին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով Գագիկ Ալեքսանդրի Ավագյանի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, տալ համաձայնություն Գագիկ Ալեքսանդրի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող, Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ 06-070-0002-0002 կադաստրային ծածկագրով 0,1 հա հողամասին կից գտնվող 06-070-0248-0003 կադաստրային ծածկագրով 0,04973 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով Գագիկ Ալեքսանդրի Ավագյանին օտարելուն: Հողամասի վաճառքի գին է սահմանվում կադաստրային արժեքի չափով՝ 379606 (երեք հարյուր յոթանասունինը հազար վեց հարյուր վեց) ՀՀ դրամ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 096-Ա/:

5. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու, մեկնարկային գները, աճուրդի ու մրցույթի պայմանները հաստատելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց, տալ համաձայնություն Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 2 լոտ հողամասերը վարձակալության և 2 լոտ հողամասերը կառուցապատման իրավունքով տրամադրելուն:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 097-Ա/:

6. ԼՍԵՑԻՆ - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով, ընդլայնման նպատակով «ԱՆՏԱՌ ՌԵԶՈՐԹ» ՍՊԸ-ին օտարելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Արտակ Օհանյանը:

Զեկուցողը առաջարկեց հաշվի առնելով «Անտառ Ռեզորթ» ՍՊԸ-ի դիմումը, համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, տալ համաձայնություն «Անտառ Ռեզորթ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող Փամբակ համայնք գյուղ Մարգահովիտ 06-070-0336-0063 կադաստրային ծածկագրով 1,416183 հա հողամասին կից գտնվող 06-070-0336-0047 կադաստրային ծածկագրից 1,41 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության խոտհարքը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով «Անտառ Ռեզորթ» ՍՊԸ-ին օտարելուն: Հողամասի վաճառքի գին սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 729 675 (յոթ հարյուր քսանինը հազար վեց հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 098-Ա/:

7. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու անդամ Արմենուհի Ապրեսի Ոսկանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին հարցի նախագիծը:
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության խմբակցության ավագանու անդամ Արմենուհի Ապրեսի Ոսկանյանը Փամբակ համայնքի ավագանու ութերորդ հերթական նստաշրջանի /13.02.2025-19.08.2025թթ./ ընթացքում

բացակայել է կայացած բոլոր 8 նիստերից և որևէ հիմնավորում չի ներկայացրել բացակայությունները հարգելի համարելու վերաբերյալ: Համաձայն գործող օրենսդրության և ավագանու կանոնակարգի զեկուցողը առաջարկեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության խմբակցության ավագանու անդամ Արմենուհի Ապրեսի Ոսկանյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել՝ Փամբակ համայնքի ավագանու ութերորդ հերթական նստաշրջանի /13.02.2025-19.08.2025թթ./ ընթացքում կայացած թվով 8 նիստից 8-ին անհարգելի բացակայության պատճառով:

Համայնքի ղեկավարը հավելեց.

- Քանի որ մեր գործընկերը ինչ-ինչ պատճառներով չի կարողանում ներկայանալ նիստերին, իրեն մաղթենք և՛ անձնական, և՛ գործնական հաջողություններ: Համոզված եմ, որ նա շարունակելու է մասնակցել համայնքի հասարակական և հանրօգուտ աշխատանքներին և մշտապես լինելու է համայնքի կողքին:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 099-Ա/:

8. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի կողմից ձեռք բերված 8 հեռուստացույցները նվիրատվությամբ փոխանցելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը առաջարկեց, հաշվի առնելով ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության պետի 22.08.2025թ-ի N 95/13-362 գրությունը և համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության խնդիրների իրականացման, հրշեջ-փրկարարական ջոկատների պատրաստվածության աստիճանի բարձրացման և արձագանքման արդյունավետ կազմակերպման նկատառումներից ելնելով տալ համաձայնություն «911» ահազանգման կենտրոնի իրավիճակային դահլիճի համար 560.000 ՀՀ դրամ արժողությամբ տեսապատի թվով 8 մոնիտորները /SHIVAKI S43MF 1300 մոդելի հեռուստացույցները/ ՀՀ ՆԳՆ Փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչությանը անհատույց նվիրաբերելուն:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 100-Ա/:

9. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2024թ-ի դեկտեմբերի 25-ի թիվ 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է.
Եկամուտների գծով կապիտալ սուբվենցիաներում ավելացնել 21.147.500 ՀՀ դրամ:

Ծախսերի գծով.
04.05.01՝ «Ճանապարհային տրանսպորտ» նախահաշվի, 5113 /շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում/ հոդվածում ավելացնել 43.881.500 ՀՀ դրամ, Ձորագյուղ բնակավայրի ճանապարհի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով սուբվենցիոն ծրագրերի իրականացման և Վահագնի բնակավայրի ճանապարհի ընթացիկ նորոգման համար:
09.01.01՝ «Նախադպրոցական կրթություն» նախահաշվի, 4637 /ընթացիկ դրամաշնորհ/ հոդվածում ավելացնել 1.310.400 ՀՀ դրամ՝ Ձորագյուղի Սիրանուշ Հարությունյանի անվան մսուր-մանկապարտեզի ջրի տուգանքի վճարման համար: Նույն նախահաշվի 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածից պակասեցնել 31.424.400 ՀՀ դրամ: Նույն նախահաշվի 5113 /շենքերի և շինությունների վերանորգում/ հոդվածում ավելացնել 380.000 ՀՀ դրամ՝ Ազնվաձորի մանկապարտեզի խաղահրապարակի համար:
09.08.01՝ «Կրթության այլ դասերին չպատկանող» նախահաշվի, 4639 /այլ ընթացիկ դրամաշնորհներ/ հոդվածում ավելացնել 7.000.000 ՀՀ դրամ՝ «Դարձի՛ր Սոցիալական Ձեռներեց, շենացրո՛ւ Քո Փամբակ համայնքը» կրթական ծրագրի իրականացման համար:
Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:
Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝14, դեմ՝0, ձեռնպահ՝0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 101-Ն/:

10. ԼՍԵՑԻՆ - Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օրը: Համայնքի ղեկավարն առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2025 թվականի հոկտեմբերի 14-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:
Քվեարկությամբ, կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝0, ընդունվեց որոշում /կցվում է որոշում N 102-Ա/:
Փամբակ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի օր նշանակել 2025 թվականի հոկտեմբերի 14-ը: Նիստի սկիզբ սահմանել ժամը 14.00-ն:
Նիստի վերջում ելույթի խոսքով հանդես եկավ բնության գիտությունների դոկտոր, «Այփեն» միջազգային կայուն աղտոտիչների և տոքսիկ նյութերի վերացման ցանցի մասնագետ, «Անիկա» կազմակերպության տոքսիկ նյութերի և թափոնների ծրագրերի տնօրեն Ինդրիխ Պետրլիկը:
Նա իր ելույթի խոսքը ներկայացրեց ռուսերեն լեզվով: Ներկայացրեց հետազոտության արդյունքները, որն իրականացվել է Քարաբերդի տարածաշրջանում, սակայն հետազոտության վերաբերյալ համայնքապետարան որևէ փաստաթուղթ չներկայացրեց: Պ-ն Պետրլիկը նշեց, որ հայտնաբերված վնասակար և տոքսիկ նյութերի քանակը թույլատրելիից ավելի է, որը կարող է երկարաժամկետ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի՝ մարդկանց, կենդանիների և բույսերի վրա: Միջավայրի վրա ազդեցության գահատման նպատակով իրականացվել են մի շարք բիոլոգիական հետազոտություններ: Խոսքը եզրափակեց նշելով, որ հանքի գործունեությունը բացասական ազդեցություն կունենա մարդու առողջության վրա՝ հատկապես երիկամների, նյարդային համակարգի վրա, կբարձրանան օնկոլոգիական խնդիրները:

Համայնքի ղեկավարը շնորհակալություն հայտնեց ելույթի համար:

Նա հայտարարեց, որ օրակարգի հարցերը սպառվել են և նիստը համարվում է փակված:

ՆԻՍՏԻՆ ՆԵՐԿԱ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԱՆԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ _____

ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ _____

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷՄՄԱ _____

ԵՍԱՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԵՎԱԿ _____

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԳՐԻԳՈՐ _____

ԿՈՍՏԱՆԴՅԱՆ ՍՈՒՐԵՆ _____

ՀԱԿՈԲՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ _____

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՆԱԻՐԱ _____

ՄԱՐԱՆԴՅԱՆ ՍԱՍՈՒՆ _____

ՊԱՊԻՆՅԱՆ ՊԱՎԼԻԿ _____

ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ _____

ՍՐԱՊՅԱՆ ԱՐՇԱԿ _____

ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ՌԱԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆ